կեանք, Օրենք վայելուչ կենցաղավարութեան (1871), Ուրուագիծ ոգւոյ և ընթացից Մխիթարեանց Միաբանութեան Վենետկոյ (Բ. տիպ 1876, որուն Ա. տիպը Բարիզ՝ 1858 ին): Այնուհետև դպրատուն և տպագրատուն կը գոցուին:

371-373. **ԲԱՍՏԱՎ**ի մէջ իրենք կը հիմնեն Խալիպեան տպարանի գրաշարներեն ՏԷՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆ որ կը հրատարակէ. — Խրիմու Հայոց լեզուով առակներ, Ի սէր հայրենեաց, Ադաւնեակ (1875), Նոր ազգ. երգարան (1878), Երուսաղէմի Հայոց ազգ. վանուց մասին տեղեկութիւն, Աղօթագիրք, Բանալի գիտութեան ռուս լեզուի (1883), Փունջ իմաստալի բանից (1886), Վէպեր և պատկերներ, Բառարան հայ-ռուս (հեղինակ՝ ինքը) 1889: ** ՏՊԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿ.ը 1898 ին տպած է Ռ. Բերբերեանի Հայոց նորագոյն բանաստեղծները: ** ԴՈՆՈԿԱՅԻ ԲԼԷՉ տպարանէն 1906 ին լոյս ընծայուած են Ընկեր, մի՛ դաւաճանիր, Խարուած յոյսեր: — Դարձեալ, Ռոստովի մէջ տպուած են 1896-7 ի **Օրացոյցներ**:

374-378. **ԱԿՆԵՐԱՆԴԻՐԱՊԷՍ** քանի մը Հայու տպարաններ բացուած են՝ **1876** էն սկսեալ. — Գ. Ս. ՍԱՆՈՅԵԱՆՑ, որուն տպածներէն յիշենք. Սկզբունք երկրաչափութեան, Հիմնական . . . կանոններ, Աշրդ Դարիբի հէքեաթը, Ծոցի բառգիրք ռուս. հայ., Օլիվեր, **Շիրակ Օրացոյց** (1901-2): ** ԱԲՐ. Մ. ՄԱԼԽԱՍԵԱՆ՝ **1892** էն սկսեալ տպած է Բանաստեղծութիւններ, Արիստակիսի Լաստիվերտացւոյ Վրդ. Հայոց Պատմ., Այբբենարան հայ-ռուս., Ճշմարտութիւնը չի մեռնում, Պառաւաշունչ (1911) ևն. ևն.: ** ՍՏԵՓԱՆԵԱՆՑ **190**ի էն սկսեալ տպած է Առողջապահական նուէր նորատի կանանց ևն.: ** ՅՈՎՀ. ԱՓԻՆԵԱՆՑ (ապա ՇԻՐԱԿ)ի 1903 էն սկսեալ տպածներէն թուենք Բանաստեղծութիւններ, Շիրակ **Օրացոյցներ** (1903-12), Խիլաթաթ, Վերածնութեան մեղեդիներ, ևն.: ** Յ. ՂԱՍԱՊԵԱՆ 1905 էն սկսեալ տպած է Նորահաս օրիորդներին բարեկամական խորհուրդ, Լրտես (1906) ևն.: — Իսկ Ադեքսանդրապոլի թերթերէն յիշենք Ախուրեան, Ժայռ. և Արագած:

379-389. **ԲԱԳՈՒ** 1864 ին հիմնուած է ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿ.ը որ իր տպարանն ունեցաւ 1872 ին՝ Էնֆիաճեանի տառերով, ուրկէ լոյս ընծայուած գիրքերէն յիշենք Գօշ Մխիթարի, Ողոմպիանու և Եզովպոսի ընտիր առակները (1878): ** Ս. Բ. ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ տպած է Մի կաթիլ արիւն (1885), Տեղեկագիր, Երկու վէպիկներ, եւայլն: ** ԳԻՒԼԲԱՂԱՐԵԱՆ տպած է Արեւելեան գրոյց (1894), Զարլզ-Դարվին, ևն.: ** Ս. Թ. ՇԱՀԲԱՂԵԱՆ 1897 էն սկսեալ տպած է Ստենլի, Փոքրիկ լօրտի պատմութիւնը, Վերջին օրերս Սախալինում (1910): ** ԵՂԲ. ՂԱՂԱՐԵԱՆ տպած է կոյրցած բախտ (1899), Սոխակ Հայաստանի (1902), Քոյրը: ** Հ. Ս ԵՐԵՒԱՆՑԵԱՆ տպած է Հին-Նոր երգուվիրքերից (1902), Ինչպէ՛ս իրականացնել ազգութիւնների հաւասարութիւնը ևն.: ** Ս. ԱՆՏՕՆԵԱՆՑ 1903 ին տպած է Անտոնիոսի «Լեհաստանի Հայերի պատմութեան վերջին երեսը»: ** «ԱՐՕՐ» տպած է Հայերը Տաճկաստանում (1903) ևն. ևն.: ** «ՏՐՈՒՊ» տպած է Կիրակնօրեայ դպրոցներ (1906), Բանաստեղծութիւններ: ** ԵԼԵԲՏՐԱԿՈ 1909 ին տպած է Ի՞նչ բան է Զեմստվոն: ** «ԲԱԳՈՒ» թերթի տպարանէն 1910 ին լոյս ընծայուած են Արտաշես Բ., Ժողովուրդը ժողովրդեան Լեկներու մէջ: — Բագուի մէջ վերջերս սկսած է հրատարակուիլ **Նոր հուֆ** թերթը:

390-395. **ԵՐԵՒԱՆ**ի մէջ առաջնութիւնն ունի ՊՍԱԿ թերթի (խմբ. Տ. Կ. Վասակ Պապաջանեան) տպարանը (1880-3) ուրկէ լոյս ընծայուած են Ի՞նչ է ժամանակը, Ի՞նչ է խօսում սենեակը, Երեւանու նահանգի բուսականութիւնը: ** Ա. ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ հրատարակած է Տեղագրութիւն Երեւանի (1889), Բարի երեխաներ: ** Է. ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ տպած է Կոնֆուկիոս (1896) ևն.: ** Թ. ԷՏԷԼԼԻՆՆՍ տպած է Առամներ և նոցա առողջապահութիւնից (1899): ** ԱՅՎԱԶԵԱՆՑ ԵՒ ՆԱՀԱՊԵՏԵԱՆՑ լոյս ընծայած են Հայ-թուրքական ընդհարումը (1907): ** «ԼՈՅՍ» տպարան. — Մ. Նալբանդեանի կեանքի հետաքրքիր մի էջը, Ազատագր. շարժումը (1908), Դասագիրք բնագիտութեան (1910): Երեւան հրատարակուած թերթերէն յիշենք Բժիշկ Լ. Տիգրանեանցի «Առողջապահական»ը, «Երեւանի յայտարարութիւններ»ը, «Հրազդան»ը (1908), «Նոր Զայն»ը, «Կռան»ը որ ցարդ կը շարունակուի: